



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2014 թվականի N 1112 - Ն

2014 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի «2014 թվականի ձմեռային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին» ՆՀ-544-Ն հրամանագրի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ** **ն ւ մ է.**

1. 2014 թվականի ձմեռային զորակոչի ընդհանուր ղեկավարումն ապահովելու նպատակով ստեղծել հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի:

2. 2014 թվականի ձմեռային զորակոչի անցկացման աշխատանքների համակարգման նպատակով ստեղծել մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովներ և հաստատել դրանց կազմերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հաստատել կենտրոնական բժշկական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝

1) 2014 թվականի ձմեռային գորակոչն անցկացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ 2014 թվականի դեկտեմբեր - 2015 թվականի փետրվար ամիսներին.

2) գորակոչից խուսափող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ նյութերն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ, իսկ գորակոչի ավարտից հետո՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի համապատասխան կայագորային քննչական բաժիններ (բաժանմունքներ).

3) առնվազն մեկ ամիս առաջ՝ մինչև գորակոչը կանխարգելիչ պատվաստումներ ստանալու համար ապահովել հանրապետության զինվորական կոմիսարիատների կողմից գորակոչվող քաղաքացիների՝ սահմանված կարգով ներկայացումը կցագրված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ:

5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին՝

1) գորակոչից խուսափող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև այդ բնույթի գործերով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը վերցնել անմիջական վերահսկողության տակ.

2) ուժեղացնել Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող գորակոչից խուսափող անձանց հետախուզման ու հանրապետություն վերադարձնելու գործընթացի նկատմամբ վերահսկողությունը:

6. Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման այլ մարմինների և կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևերից) ղեկավարներին՝

1) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափելու համար քրեական հետապնդում հարուցված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների ցուցակներն ստանալուց հետո նրանց նկատմամբ կիրառել աշխատանքային, տնտեսական ու այլ ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումներ և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին:

2) իրավասության սահմաններում ապահովել Հայաստանի Հանրապետության զորակոչային տարիքի քաղաքացիների ներկայանալը զինվորական կոմիսարիատներ:

7. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության մարզպետներին և առաջարկել Երևանի քաղաքապետին՝

1) 2014 թվականի ձմեռային զորակոչի անցկացման համար զինվորական կոմիսարիատներն ապահովել զորակոչային տեղամասերով և պատշաճ պայմաններով հանձնաժողովների աշխատանքը ծավալելու համար, սպասարկող անձնակազմով, ինչպես նաև նյութական և ավտոտրանսպորտային միջոցներով:

2) հաստատել տեղական (ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների) զորակոչային հանձնաժողովների անհատական կազմերը՝ դրանցում ընդգրկելով վարչատարածքում գործող բժշկական հաստատությունների առաջատար բժիշկ-մասնագետներին, իսկ Երևանում, անհրաժեշտության դեպքում, նաև՝ հանրապետական ենթակայության բժշկական հաստատությունների բժիշկ-մասնագետներին:

3) նախատեսել և սահմանված կարգով յուրաքանչյուր բժիշկ-մասնագետի մի քանի թեկնածությունը սեղմ ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն՝ տեղական զորակոչային հանձնաժողովների 2014 թվականի ձմեռային զորակոչի բժշկական սպասարկումը պատշաճ կազմակերպելու նպատակով:

8. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝

1) անհրաժեշտության դեպքում, համաձայն Հայաստանի Հանրապետության մարզպետների և Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված հայտերի, տեղական զորակոչային

հանձնաժողովների կազմերը համալրել հանրապետական ենթակայության բժշկական հաստատությունների համապատասխան բժիշկ-մասնագետներով.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հայտով գորակոչիկների ֆյուտրո (ռենտգեն) զննում, սոնոգրաֆիկ հետազոտում, ինչպես նաև կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով հանձնարարել համակարգի բուժկանխարգելիչ հաստատություններին՝ ապահովել անհրաժեշտ քանակով պատվաստանյութեր և ֆյուտրո (ռենտգեն) ժապավեններ և երևակման նյութեր:

9. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինների միջոցով պարտադիր զինվորական ծառայության գորակոչման ենթակա Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին ծանուցել «Ձինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան զինվորական կոմիսարիատներ ներկայանալու համար.

2) աջակցել օտարերկրյա պետություններում գտնվող՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչման ենթակա քաղաքացիների Հայաստանի Հանրապետություն վերադարձին և ապահովել դրա մասին իրազեկումը Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարին:

10. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝

1) ապահովել՝

ա. գորակոչիկների անվտանգ փոխադրումը և հասարակական կարգի պահպանումը հանրապետության գորակոչային տեղամասերում,

բ. գորակոչից խուսափող գորակոչիկների որոնումը Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ու նրանց ներկայանալը գորակոչային տեղամասեր.

2) գորակոչի ընթացքում գորակոչիկներին Երևանի սահմաններից դուրս՝ փոխադրող ավտոբուսներն ուղեկցելու համար հանրապետական հավաքակայանին կցել ճանապարհային ուստիկանության վեց անձնակազմ:

11. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ցանկը՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գորակոչիկների փոխադրումներն իրականացնելու համար:

12. Սահմանել, որ գորակոչի կազմակերպման ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության միջոցների հաշվին՝ բացառությամբ սույն որոշման 8-րդ կետով կատարվող ծախսերի:

13. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ուստիկանության պետին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ գորակոչից խուսափելու դեպքերը կանխելու նպատակով գորակոչի ընթացքում ուժեղացնել վերահսկողությունը Հայաստանի Հանրապետության սահմանային հաղորդակցության ուղիներում և գորակոչային տարիքի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հանրապետությունից մեկնումը թույլատրել միայն զինվորական գրքույկներում զինվորական ծառայությունն ավարտելու կամ հիվանդության պատճառով պահեստագրում գտնվելու, իսկ ամրակցման (նախնական հաշվառման) վկայականներում՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման իրավունքից օգտվելու մասին զինվորական կոմիսարիատների համապատասխան նշումների առկայության դեպքում:

14. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային զինվորական կոմիսարիատներին կից հանձնաժողովներում

նոր նշանակված բժիշկ-մասնագետների համար, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում պետպատվերի շրջանակներում, կազմակերպել «Զորակոչիկների ռազմաբժշկական փորձաքննության 35-ժամյա ծրագրով» կատարելագործման դասընթացներ:

15. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին և հանրապետական գորակոչային հանձնաժողովին:

16. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2014 թ. հոկտեմբերի 16
Երևան



Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Կ Ա Ձ Մ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- Ս. Օհանյան - ՀՀ պաշտպանության նախարար
(հանձնաժողովի նախագահ)
- Յու. Խաչատուրով - ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ
(հանձնաժողովի նախագահի տեղակալ)
- Հ. Մուրադյան - ՀՀ զինվորական կոմիսար
- Վ. Գասպարյան - ՀՀ կառավարությանն առընթեր
ՀՀ ոստիկանության պետ
- Գ. Հակոբյան - ՀՀ կառավարությանն առընթեր ազգային
անվտանգության ծառայության տնօրեն
- Գ. Կոստանյան - ՀՀ գլխավոր դատախազ
- Ա. Մուրադյան - ՀՀ առողջապահության նախարար
- Գ. Բեգլարյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
- Ա. Աշոտյան - ՀՀ կրթության և գիտության նախարար
- Է. Նալբանդյան - ՀՀ արտաքին գործերի նախարար
- Կ. Նահապետյան - ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության,
ազգային անվտանգության և ներքին գործերի
մշտական հանձնաժողովի նախագահ
(համաձայնությամբ)
- Ա. Ասատրյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
պետախրավական վարչության պետ
(հանձնաժողովի քարտուղար)
- Վ. Ասցատրյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
ազգային փոքրամասնությունների և կրոնի
հարցերի
բաժնի պետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
հոկտեմբերի 16-ի N 1112 - Ն որոշման

Կ Ա Ձ Մ

ՄԱՐԶԱՅԻՆ (ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ) ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Տարածքների և զինվորական կոմիսարիատների անվանումը	Հանձնաժողովների անդամները
1	2
<p><u>Երևան</u></p> <p>Արաբկիր Մաշտոց Կենտրոնական Նոր Նորք Շահումյան Շենգավիթ Էրեբունի</p>	<p>Է. Ապրիամով</p> <ul style="list-style-type: none"> - Երևանի քաղաքապետ (հանձնաժողովի նախագահ) - ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի առաջին տեղակալ - Երևան քաղաքի ոստիկանության վարչության պետ - Երևան քաղաքի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի պետ
<p><u>Արագածոտն</u></p> <p>Աշտարակ Ապարան Թալին</p>	<p>Ա. Նազարյան</p> <ul style="list-style-type: none"> - Արագածոտնի մարզպետ (հանձնաժողովի նախագահ) - ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ - մարզային ոստիկանության վարչության պետ - Արմավիր կայազորի ռազմական ոստիկանության Աշտարակի բաժանմունքի պետ
<p><u>Արարատ</u></p> <p>Արտաշատ Արարատ Մասիս</p>	<p>Ա. Կարապետյան</p> <ul style="list-style-type: none"> - Արարատի մարզպետ (հանձնաժողովի նախագահ) - ՀՀ ԶՈՒ ԳՇ հետախուզության վարչության պետ - մարզային ոստիկանության վարչության պետ - ՀՀ ՊՆ Արարատի ռազմական ոստիկանության բաժանմունքի պետ
<p><u>Արմավիր</u></p> <p>Արմավիր Էջմիածին</p>	<p>Ա. Դավթյան</p> <ul style="list-style-type: none"> - Արմավիրի մարզպետ (հանձնաժողովի նախագահ) - ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի օպերատիվ վարչության պետ - մարզային ոստիկանության վարչության

		<p>պետ</p> <ul style="list-style-type: none"> - Արմավիրի կայագործի ռազմական ոստիկանության բաժնի պետ
<p><u>Գեղարքունիք</u></p> <p>Գավառ Մարտունի Սևան Վարդենիս Կրասնոսելսկ</p>	Պ. Պողոսյան	<p>Գեղարքունիքի մարզպետ (հանձնաժողովի նախագահ)</p> <ul style="list-style-type: none"> - 2 -րդ բանակային կորպուսի հրամանատար - մարզային ոստիկանության վարչության պետ - Սևանի կայագործի ռազմական ոստիկանության բաժնի պետ
<p><u>Լոռի</u></p> <p>Վանաձոր Սպիտակ Ստեփանավան Տաշիր Թումանյան</p>	Օ. Գասպարյան	<ul style="list-style-type: none"> - Լոռու մարզպետ (հանձնաժողովի նախագահ) - 3-րդ բանակային կորպուսի հրամանատար - մարզային ոստիկանության վարչության պետ - Լոռու կայագործի ռազմական ոստիկանության Վանաձորի բաժնի պետ
<p><u>Կոտայք</u></p> <p>Կոտայք (Աբովյան) Հրազդան Չարենցավան Նաիրի</p>	Հ. Բաղմանյան	<p>Կոտայքի մարզպետ (հանձնաժողովի նախագահ)</p> <ul style="list-style-type: none"> - ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ - մարզային ոստիկանության վարչության պետ ոստիկանության Աբովյանի բաժնի պետ
<p><u>Շիրակ</u></p> <p>Գյումրի Արթիկ Աշոցք</p>	Ս. Գալստյան	<ul style="list-style-type: none"> - Շիրակի մարզպետ (հանձնաժողովի նախագահ) - ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ - մարզային ոստիկանության վարչության պետ
<p>Անի Ախուրյան</p>		<ul style="list-style-type: none"> - Շիրակի կայագործի ռազմական ոստիկանության բաժնի պետ
<p><u>Սյունիք</u></p> <p>Կապան Գորիս Սիսիան</p>	Տ. Փարվանյան	<ul style="list-style-type: none"> - Սյունիքի մարզպետ (հանձնաժողովի նախագահ) - 1 -ին բանակային կորպուսի հրամանատար - մարզային ոստիկանության վարչության պետ

Մեղրի	<ul style="list-style-type: none"> - Գորիսի կայագորի ռազմական նստիկանության բաժնի պետ
<p><u>Վայոց ձոր</u></p> <p>Եղեգնաձոր Վայք</p>	<p>Ա. Մակարյան</p> <ul style="list-style-type: none"> - Վայոց ձորի մարզպետ (հանձնաժողովի նախագահ) - 4-րդ բանակային կորպուսի հրամանատար - մարզային նստիկանության վարչության պետ - Եղեգնաձորի կայագորի ռազմական նստիկանության բաժնի պետ
<p><u>Տավուշ</u></p> <p>Իջևան Տավուշ (Բերդ) Նոյեմբերյան Դիլիջան</p>	<p>Ա. Բրուտյան</p> <ul style="list-style-type: none"> - Տավուշի մարզպետ (հանձնաժողովի նախագահ) - ՀՀ ԶՈՒ ԳՇ վարչական ապարատի ղեկավար - մարզային նստիկանության վարչության պետ - Լոռու կայագորի ռազմական նստիկանության Իջևանի բաժնի պետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ջ Մ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- Հ. Մուրադյան - ՀՀ զինվորական կոմիսար
(հանձնաժողովի նախագահ)
- Հ. Մինասյան - ՀՀ զինվորական կոմիսարիատի ավագ բժիշկ
(հանձնաժողովի նախագահի տեղակալ)
- Հ. Նազարյան - ՀՀ պաշտպանության նախարարության
ռազմական ոստիկանություն, ավագ լեյտենանտ
- Ա. Մուրադյան - ՀՀ պաշտպանության նախարարության
աշխատակազմի վերահսկիչ վարչություն
- Ս. Ղասաբյան - ՀՀ առողջապահության նախարարություն
- Վ. Հակոբյան - ՀՀ առողջապահության նախարարություն
- Ա. Այվազյան - թերապևտ, բ.գ.դ., պրոֆ.
- Գ. Հարությունյան - թերապևտ, բ/ծ մայոր
- Պ. Սառաֆյան - սրտաբան
- Հ. Հովսեփյան - սրտաբան, բ/ծ մայոր
- Հ. Մանվելյան - նյարդաբան, բ.գ.դ., պրոֆ.
- Տ. Ազարյան - նյարդաբան, բ/ծ մայոր
- Վ. Հովհաննիսյան - մաշկաբան, բ/ծ մայոր
- Խ. Էբամջյան - վիրաբույժ
- Տ. Մարտիրոսյան - վիրաբույժ, բ/ծ մայոր
- Ա. Սոխակյան - վնասվածքաբան
- Ս. Սահակյան - վնասվածքաբան, բ/ծ մայոր
- Ս. Փխրիկյան - օտոլարինգոլոգ, բ.գ.թ.
- Հ. Բարսեղյան - օտոլարինգոլոգ
- Ե. Բաղդասարյան - ակնաբույժ, բ.գ.թ.
- Ն. Բաղդասարյան - ակնաբույժ, բ/ծ մայոր

- | | |
|---------------------------|--------------------------------|
| Ա. Թումանյան | - հոգեբույժ |
| Ա. Արզումանյան | - հոգեբույժ |
| Ս. Սարգսյան | - հոգեբույժ, ք/ծ մայր |
| Ռ. Բզանյան
սերժանտ /Պ/ | - համակարգչային օպերատոր, ավագ |
| Ա. Բաբայան | - հանձնաժողովի քարտուղար |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ